

Կ Ա Ր Գ

«ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑ «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Առաջադրանքի նկարագրությունը

Նպատակը՝ որոշել դիմորդի պատրաստվածության աստիճանը:

Առաջադրանքը կատարվում է A3 ֆորմատի գծագրական թղթի վրա՝ մատիտով:

Առաջադրանքը կազմված է երկու մասից՝ գծանկար և կոմպոզիցիա:

Առաջադրանքը կատարվում է քննական երկու օրվա ընթացքում:

1. Գծանկար. ըստ վիճակահանության արդյունքների, ընտրվում է գիպսե այն զլուխը, որը պահանջվում է նկարել: Աշխատանքը կատարելու համար տրվում է առավելագույնը 8 ժամ՝ մեկ ժամ ընդմիջումով:
2. Կոմպոզիցիա. ըստ վիճակահանության արդյունքների, ընտրվում է թվով 3 երկրաչափական մարմին, որոնց օգտագործմամբ ներկայացվում է կոմպոզիցիոն պատկեր: Աշխատանքը կատարելու համար տրվում է առավելագույնը 4 ժամ:

Գնահատման չափանիշները

Առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 20 միավոր, ընդ որում. հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ առաջադրանքի յուրաքանչյուր մաս գնահատում է համեմատական սկզբունքով՝ առավելագույնը 20 միավոր, որից հետո հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականների գումարը արձանագրվում է աշխատանքի վրա և ստորագրվում հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Վերջնական գնահատականը որոշվում է առաջադրանքի 2 մասերի միավորների գումարի և քննության երկու մասերում հանձնաժողովի քննությանը ներկա անդամների գումարային թվաքանակի հարաբերությամբ:

Քննության արդյունքների բողոքարկումը

Կատարված առաջադրանքը պահպանվում է ընդունելության հանձնաժողովի մոտ և ներկայացվում դիմորդին բողոքարկման ընթացքում:

Գնահատականները հայտարարելուց և քննության թերթիկը ստանալուց հետո արդյունքների հետ դիմորդի անհամաձայնության դեպքում վերջինս 1 օրվա ընթացքում իրավունք ունի բողոքարկելու քննության արդյունքները՝ ներկայացնելով համապատասխան դիմում-բողոք: Դիմում-բողոքը քննարկվում է 1 օրվա ընթացքում համապատասխան հանձնաժողովի կողմից գումարված նիստում, որին ներկա է գտնվում նաև առարկայական հանձնաժողովի նախագահը:

Դիմորդը իրավունք ունի ներկա գտնվելու հանձնաժողովի նիստին:

Նիստի ընթացքում կայացված որոշումը ենթակա չէ վերանայման:

Գիտխորհրդի նախագահ՝

Հ.Թոքմաջյան

Գիտական քարտուղար՝

Ա.Առաքելյան

